ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2023 թվականի N 15-Ա

ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ, ՍՏԵՓԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետի 2023 թվականի հունվարի 26-ի N Ն/79-2023 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ ***Հայկ Մկրտչյանին***, մարզպետի օգնական ***Ստեփան Բաղդասարյանին*** և մարզպետի տեղակալի օգնական ***Հարություն Գալստյանին*** 2023 թվականի հունվարի 27-ին, մեկ օրով գործուղել քաղաք Երևան՝ «Երևանի հրաձգության հանրապետական մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կիսաբաց հրաձգարան, «Պետական մարմինների աշխատակիցների և դեսպանատների ներկայացուցիչների մասնակցությամբ հրաձգության հանրապետական մրցաշար» մարզական միջոցառմանը մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի հունվարի 26
ք. Հրազդան